**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«21» 03 2013 թ.

Հ Կ-436

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թովմասյան,

Ի պատասխան Ձեր 2013 թվականի մարտի 5-ի թիվ 01/1226-13 գրության՝ ուղարկում ենք «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

22 03 010/3087-13 2013 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսվում է հարկադիր կատարողի նկատմամբ կիրառել նաև **«Անբասիր ծառայության համար»** **<u>մեդալով</u>** պարգևատրում խրախուսանքի տեսակը:

Հաշվի առնելով այն, որ մի շարք օրենքներով /«Ոստիկանությունում ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին»/, որպես խրախուսման միջոց նախատեսված է նաև մեդալով պարգևատրումը, սակայն մեդալի անվանումը նախատեսված չէ, իսկ օրենքի մակարդակով մեդալների անվանումները նախատեսված են միայն «Պետական պարգևների մասին» ՀՀ օրենքով, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետից հանել «Անբասիր ծառայության համար» բառերը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Վիրաբյան